ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱՁԳԵՍՏ-23/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
13	Կիտել՝ բարձրագույն դասային աստիճան ունեցող Կոմիտեի ծառայողների համար մուգ կապույտ 67% բուրդ, 33% Պ/Է 317գր/մ2 կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալած օձիքով, օձիքի եզրերը մշակված են կարմիր 342 գր/մ2 խտությամբ մահուդե եզրագծով,օձիքի վրա ոսկեգույն թելով ասեղնագործվում է Հակակոռուպցիոն Կոմիտեում բարձրագույն դասային աստիճան ունեցող Կոմիտեի ծառայողների համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (3 ՁԼ, Նկար 2), միաշարք չորս ոսկեգույն մեծ կոճակներով, թևքի վրա մշակված են ծալքեր, որոնց վերին հատվածում կարմիր թելով կարվում է երկգիծ ասեղնագործություն: Կիտելի 2 փեշերի վրա ուղղանկյուն կափույրով ներկարված գրպաններ են: Թևքերը երկկարանի են, թիկունքն ամբողջական է՝ երկու կողային բացվածքով: Աստառը՝ կապույտ գույնի մետաքսե, ծոցագրպանով: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ՀՀ զինանշանի կարմիր եզրագծով թևքանշանն է, իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ Հակակոռուպցիոն Կոմիտեի կարմիր եզրագծով ջակարդե թևքանշանը (ՁԼ 8, Նկար 3): Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: Տաբատ՝ մուգ կապույտ՝ 67%բուրդ, 33%Պ/Է 317գ/մ2 խտությամբ կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր գույնի 3 եզրագիծ, 2-ը՝ 2 սմ լայնությամբ, իսկ մեջտեղինը՝ 1,5-ից 2 մմ (ՁԼ 8, Նկար 3, 5, 7): Գոտին՝ կամրջակներով: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, հետնամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասը՝ մինչև ծնկները մետաքսյա աստառով: Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱՁԳԵՍ-23/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
13	